

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ


ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է ավագանու որոշում 42

Գ. Գյուլագարալի

2016թ



Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	4
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	5
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները	8
2.1.5.Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններ	9
2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	12
3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	13
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	15
4. Համայնքի զարգացման ծրագրի ֆինանսավորումը.....	16

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Միտով ողջունում եմ Գյուլագարակ համայնքի բնակչությանը և բոլոր նրանց ուժերը հետաքրքրված են Գյուլագարակ համայնքով, կատարվող ծրագրերով, այս հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումով, որոնք վեր են հանվել բազմաթիվ քննարկումների ընթացքում:

Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականացնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին, համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի ինականացմանը, հասարակական կյանքի ակտիվացման գործնթացներին:

Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են

- Զարգացնել տուրիզմը
- Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը
- Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը
- Ստեղծել բոլոր նախադրյալները կրթությանը և մշակույթի զարգացման համար
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը
- Նոր աշխատատեղերի ստեղծում

➤ Համայնքում առկա հիմնախնդիրները

- Բնակչության սոցիալապես անապահով վիճակ /70%-80%/
- Առկա գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների մաշվածություն
- Ոչ ճիշտ օգտագործման արդյունքում ուժասպառված հողերը
- Ոռոգման ջրի բացակայություն:
- Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի մաշվածության
- Արոտավայրերի ճանապարհների անմխիթար վիճակ, բացակայություն-
- Աշխատատեղերի բացակայություն
- Ներհամայնքային ճանապարհներ և գիշերային լուսավորության կառուցում

➤ Լուծման ուղիները

- Օրենքների փոփոխություններ
- Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներկրում
- Աշխատատեղերի ստեղծում
- Իրավագիտական ծառայությունների մատուցում
- Գովազդ
- Հանրային մասնակցություն
- Համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպություններ հետ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակվում է ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և այլ օրենսդրական ակտերով:

Այն մշակվում է համայնքի ղեկավարի, աշխատակազմի, ավագանու,

բնակչության, հանձնաժողովների կողմից արված առաջարկությունների և քնարկումների հիման վրա, որը հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Գյուլագարակ գյուղը գտնվում է՝ մարզկենտրոն Վանաձորից 17 կմ հյուսիս-արևմուտք, Ստեփանավան քաղաքից 8 կմ հարավ-արևելք: Գյուղը տեղակայված է Չորագետի Գարգառ վտակի ձախ ափին՝ ծովի մակարդակից 1400 մ բարձրության վրա:

Գյուլագարակից 3 կմ հարավ գտնվում է «Սոճուտ» մանկական առողջարանը և «Դենդրոպարկը»:

Գյուղից 2 կմ դեպի հարավ գտնվում է Տորմակաղուտ գյուղատեղին և VI դ. եկեղեցու ավերակները:

Համայնքի հողատարածքը

	ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի հիմնական հողային ռեսուսները	հա
1.	Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը որից՝	2323.22հա
2.	Բնակավայրի հողեր	133.61հա
3.	Գյուղատնտեսական նշանակության հողեր	1515.15հա
4.	Անտառային հողեր	496.57հա
5.	Հողատեսքեր	142.39հա
6.	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	35.5հա

➤ 1.2.ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչությունը կազմում է 2642 մարդ, որոնցից՝

➤ Բնակչության տարիքային կազմը՝

- 0-5 տարեկան 164
- 5-18 տարեկան 335
- 18-62 տարեկան 1620
- 063-ից բարձր 523


➤ Բնակչության սոցիալական կազմը

- Թոշակառուներ 523
- Միակողմանի ծնողագուրկ երեխաներ 14
- Հաշմանդամներ 47


- Աշխատունակներ 1823

Սոցիալական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ 226

Համայնքի բնակչության կազմը



Բնակչության սոցիալական կազմը



2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն- 54309.6
- ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը -49.6(%)
- Համայնքի տարածքում առկա են հետևյալ արդյունաբերական ձեռնարկությունները՝
Քարի վերամշակման արտադրամաս -1 - գործող
Թռչնաբուծարան 1 - գործող
- Համայնքի տարածքում ծառայությունների բնագավառի ձեռնարկություններն են՝
Մանկական Առողջարան 1 գործող
Խանութներ-9 զբաղված են առևտրով
Հասարակական սննդի կետեր՝-2, որից՝ գործող 2-ը
Համայնքը համարվում է գյուղատնտեսական՝
Դաշտավարություն
Անասնապահություն
Արտադրվող հիմնական գյուղատնտեսական մթերքներն են՝ ցորեն, գարի, բանջարաբուստանային կուլտուրաներ

Անվանում	հեկտար	Արտադրանքի տոննա	Իրացման շուկա
Ցորեն	100հա	550	ՀՀ շուկա
Գարի	40հա	22.5	ՀՀ շուկա
Բանջ.բուստ. կուլտուրաներ	70հա		ՀՀ շուկա
Կերային կուլտուրաներ	165հա		ՀՀ շուկա

Անասնապահություն. Արտադրվող հիմնական մթերքներն են՝ կաթ, միս,բուրդ

Անվանում	Ցենտներ	Իրացման շուկա
Կաթ	12400	ՀՀ շուկա
Միս	420	ՀՀ շուկա
Բուրդ	25	ՀՀ շուկա

- Զբոսաշրջության համար գրավիչ են «Դենդրոպարկ»բուսաբանական այգին,Տորմակ կիսավեր եկեղեցին:
- Համայնքում գործում է հիմնական դպրոց
աշակերտների թիվը 304
Աշխատողների թիվը 43 աշխատող որից 8-ը դրսից
Դպրոցը հիմնանորոգված է
Համայնքում գործում է նախակրթարան, որտեղ հաճախում են 25 երեխաներ :
- Համայնքում գործում է բուժ. Կետ, համապատասխան շենքում:
- Բուժ-ամբուլատորիայում աշխատում են 4 աշխատողներ
- Ընտանեական նպաստի համակարգում ընդգրկված են 226 ընտանիքներ:
- գործազրկության մակարդակը 45%:


2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր

Հայաստանի Տարածքային Ձարգացման Հիմնադրամի աջակցությամբ 2017թ կկառուցվի մանկապարտեզ, որը նախատեսված է 3 տարիքային խմբի համար՝ մինչև 90 երեխա: Մանկապարտեզի կառուցումը Կրթաձացնի համայնքի ընդհանուր կրթվածության մակարդակը, Կփոփոխի մանուկների առօրյան՝ նրանց մեկ քայլ ավելի մոտ դարձնելով քաղաքակրթությանը: Դա նաև մի քանի տասնյակ հիմնական և ժամանակավոր աշխատատեղերի ստեղծում է, որը գործազրկության բարձր մակարդակ ունեցող համայնքի համար նշանակալի փոփոխություն է


2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	2016	2017	2018	2019	2020	2021
Ա.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	35699,53	36376,9	37510	39490	41525	43560
1.	Հողի հարկ	5399,79	5115	5170	5280	5390	5500
2.	Գույքահարկ	1938,2	1980	2090	2200	2310	2420
3.	Վարձավճար	3042,5	3080	3190	3300	3410	3520
4.	Տեղ. տուրք	462	550	605	660	715	770
5.	Այլ եկամուտներ	440	550	605	550	550	550
6.	Մուտքեր հողի օտարումից	415,14	1100	1650	2200	2750	3300
7.	Ընդամենը սեփ. եկամուտներ	11697,63	12375	13310	14190	15125	16060
8.	Դոտացիա	24001,9	24001,9	24200	25300	26400	27500
Բ.	ԾԱԽՍԵՐ	47639,9	49530	50550	51260	52290	51160
1.	Կառավ. ապարատ. ծախսեր	25008,5	25080	25300	25410	25520	25630
2.	Գյուղատնտեսություն	1227,8	1320	1320	1430	1540	1650
3.	Տրանսպորտային կապ	1650	2200	2310	2420	2530	2640
4.	Բնակ. շինություն	4088,5	4400	4510	4620	4730	2840
5.	Հանգիստ, մշակույթ, կրոն	5940	5900	6050	5960	6270	6380
6.	Կրթություն	7040	7700	7810	7960	8030	8140
7.	Մոցիալական պաշտպան.	1320	1500	1600	1700	1800	1900
8.	Այլ խմբեր /պահուստային/	1365,1	1430	1650	1760	1870	1980

Եկամուտներ 2016



Ծախսեր 2016



2.5.Համայնքի զարգացումը խոչընդոտող գործոններ

1) Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման հիմնական խոչընդոտող գործոններն են ֆինանսի բացակայությունը, իրացման շուկայում արտադրանքի անմրցունակ լինելը, իրացման դժվարությունները, գիտելիքների պակասը:

2) համայնքի գույքի կառավարումը իրականացնելու խնդրի խոչընդոտը գործարար միջավայրի և ձեռնարկատիրության ցածր մակարդակը, ֆինանսի պակասը, բնակչության մոտ գիտելիքների պակասը:

3) Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման խոչնդոտներից են՝ շենքի ձեռք բերման խնդիրը՝ համապատասխան ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով, ինչպես նաև համապատասխան գույքի ձեռք բերման ֆինանսական խնդիրները:

4) ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչնդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի բացակայությունը և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

5) համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը բարելավելու համար խոչնդոտ է աշխատատեղերի պակասը, սեզոնային զբաղվածության արտադրամասերի բացակայությունը, սոցիալական օգնության ֆինանսի սակավությունը, լրացուցիչ եկամուտների ստացման բացակայությունը:

6) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչնդոտներից են համապատասխան մարզական կառույցների և գույքի ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

7) համայնքում բնակարանային շինարարության խթանման խոչնդոտ է համարվում ֆինանսական միջոցների բացակայությունը:

8) համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը, խնդրի խոչնդոտներից են աղբամանների, աղբահարթակների, աղբավայրի և աղբատար մեքենայի բացակայությունը, ֆինանսական միջոցների բացակայությունը:

9) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը՝ այս բնագավառում՝ ներհամայնքային տրանսպորտի ներդնումը տնտեսապես ձեռնտու չէ, իսկ ճանապարհների և ենթակառույցներ պահպանման և ժահագործման առումով կան որոշակի ֆինանսական դժվարություններ:

10) պետության պաշտպանության իրականացման աջակցումը, այս խնդրի լուծման համար կարևոր խոչնդոտ է հայրենասիրական, պետական մտածողության պակասը, գյուղաբնակների ամենօրյա զբաղվածությունը անասնապահության մեջ, տրանսպորտային միջոցների ոչ սարքին վիճակը:

11) աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը, խնդրի խոչնդոտներից են շենքերի և շինությունների ոչսեյսմակայուն լինելը, պարզագույն թաքստոցների և քաղաքացիների անահատական պաշտպանության միջոցների բացակայությունը, ազդանշանային սարքերի բացակայությունը:

12) գյուղատնտեսության զարգացման խթանումը, կարեոր խոչնդոտ է ոռոգման ջրագծի և ջրի բացակայությունը, գյուղատնտեսական տեղնիկայի բարձր% կազմող մաշվածությունը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայությունը, արոտներներում ջրի, մակատեղերի, ծածկոցների և ճանապարհների բացակայությունը:

13) համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչնդոտ է գիտակցական մակարդակի ոչ բարձր վիճակը:

14) զբոսաշրջության զարգացման խթանման խոչնդոտ է գովազդների բացակայությունը, այդ բնագավառում բնակչության գիտելիքների պակասը, հանգստյան գոտիների և գյուղական մինի հյուրանոցների կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը:

15) համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում- այս խնդրի լուծման դժվարությունները կապված են սոցիալական վատ վիճակի և աշխատատեղերի բացակայության հետ:

16) համայնքում ծնելիության և բազմազավակության խթանման խոչնդոտներից են բնակչության սոցիալական վիճակը, աշխատատեղերի բացակայությունը, բազմանդամ ընտանիքների հանդեպ հոգածության ցածր մակարդակը, բնակչության մոտ կա մտահոգություն երեխաներին բարեկեցիկ կյանք ապահովելու հարցում:

17) համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը- այս խնդրի իրականացման խոչնդոտ է բուժկետի շենքի բացակայությունը, մասնագետների և սարքավորումների պակասը, սոցիալական խավերի ֆինանսական ցածր հնարավորությունները, առողջության պահպանման համալիր ծրագրի բացակայությունը:

18) համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանման դժվարությունները կապված են սոցիալական վիճակի և գիտակցական մակարդակի հետ:

19) համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը, կապված է սոցիալական վատ վիճակի և գիտելիքների անհրաժեշտ պաշարի բացակայության հետ :

20) բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով- այս խնդրի լուծման դժվարությունները կապված են իրազեկման, հայրենասիրական ոգու պրոպագանդման, արտերկրներում բնակվող մեր հայրենակիցների հետ մշտական կապի բացակայության, նրանց համայնքային կյանքին ծանոթացնելու և մասնակից դարձնելու խնդրի հետ , ինչպես նաև բարեգործությունների լայն լուսաբանման բացակայության հետ:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	Համայնքի թույլ կողմեր
• . Աշխատուժի առկայություն • . Միջնակարգ դպրոցի առկայություն. • Բուժ-ամբուլատորիայի առկայություն • Գյուղի աշխարհագրական դիրքը / միջպետական Մ2 մայրուղու մոտ գտնվելը/ • . Հեռահաղորդակցության առկայություն • . Գազաֆիկացման առկայություն • . Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող • «Սոճուտ» մանկական առողջարանի առկայությունը • «Դենդրոպարկ» բուսաբանական այգու առկայությունը	• . Ոռոգման ցանցի բացակայություն • . Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ • . Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ • . Ֆինանսական ռեսուրսների բացակայություն • . Ծնելիության նվազում • . Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ • . Թերաֆաղվածության բարձր մակարդակ • . Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ • . Աշխատատեղերի պակաս • . Աղբահանության մասնակի բացակայություն • Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայություն • Գյուղատնտեսական արտադրանքի ստացման բարձր ինքնարժեք և իրացման դժվարություններ • Փողոցների լուսավորության մասնակի բացակայությունը
Հնարավորություններ	Սպառնալիքներ
• . Աշխատուժի առկայություն • Տուրիզմի զարգացման համար «Դենդրոպարկ» բուսաբանական այգու և նրան հարակից գեղատեսիլ տարածքի առկայություն , պատմական և մշակութային վայրերի առկայություն: «Սոճուտ» մանկական առողջարանի առկայությունը • Շահագրգիռ ձեռներեցների նախաձեռնություններ: • Մշակույթի տան առկայությունը, որտեղ	• . Տարերային աղետների վտանգ • . Գյուղ. մթերքների գների նվազում • . Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն • . Սպառման շուկաների դժվար հասանելիություն • . Արտագաղթ. Հիվանդությունների առաջացման վտանգ • Բնակչության աճի ցածր տեմպ

3 Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Գյուլագարակ համայնքում գալիք տարիներին՝ ՀԶԾ իրականացման արդյունքում նախատեսվում է

1. Իրականացնել ծրագրեր ուղղված զբոսաշրջության զարգացմանը, որի ընթացքում նախատեսվում է համայնքում կառուցել հանգստյան գոտիներ, տնային տնտեսություններին կից հյուրանոցային տիպի շինությունների կառուցում, նոր առևտրի կետերի վերաբացում: Դեպի Դենդրոպարկ բուսաբանական այգի տանող ճանապարհի ասֆալտապատում
2. Համայնքի զարգացման ընթացքը իրատեսական և նպատակային լինելու համար անհրաժեշտ ենք համարում բնակչության բնական և արհեստական աճը: Գործարար միջավայրի բարելավումը, աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսության ինտենսիվացումը մեծ խթան կլինեն համայնքում ծնելիությանը և բազմազավակությանը, ինչպես նաև բնակչության ներհոսքին: Բազմազավակությանը և ծնելիությանը խթանելու համար նախատեսվում է նաև ֆինանսական օգնության իրականացում, նորաստեղծ ընտանիքներին անհատույց տնամերձ հողամասերի տամադրում:
3. Նախատեսվում է համայնքում պարբերական և հաստատուն աղբահանության իրականացում: Դրա համար նախատեսվում է համայնքում կառուցել 15-ից 20 աղբահարթակներ, որոնցում կտեղադրվեն աղբամաններ: Նախատեսվում է նաև աղբատար մեքենայի ձեռք բերում և աղբի պարբերական հեռացում աղբամաններից :
4. Համայնքի ճանապարհների և ենթակառուցների մասով նախատեսվում է բոլոր փողոցների, որոշ մասի շեփերապատում, ինչպես նաև ջրհեռացման առուների վերականգնում և մաքրում:
5. Երիտասանության ներգրավմամբ նախատեսվում է ակտիվ մշակույթային և մարզական միոցառումների կազմակերպում, ժամանցի կենտրոնների ստեղծում, մարզական և մշակույթային խմբակների ստեղծում: Մշակույթի տան համար գույքի և տեխնիկայի ձեռք բերում
6. Համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է համայնքային գույքը վարձակալությամբ տրամադելու աշխատանքներ, մասնավորապես համայնքային հողերի, շենքերի ու շինությունների, տեխնիկայի, սարքավորումների վարձակալությամբ տրամադելը: Նախատեսվում է նաև համայնքային սեփականության հողամասերի օտարում՝ հասարակական և արտադրական կառույցների համար, ինչպես նաև առևտրի կետերի, հանգստյան գոտիների կառուցման համար:
7. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման մասով նախատեսվում է կանաչապատ տարածքների ավելացում՝ ծառատունկ, շենքերի և շինությունների վերանորոգման և արդիականացման աշխատանքներ, փողոցների մաքրման աշխատանքներ, Պուրակի կառուցում՝ խաղահրապարակով

8. Համանքում բնակարանային շինարարության խթանման բնագավառում նախատեսվում է երիտասարդ ընտանիքներին տնամերձ հողամասերի տրամադրում, օժանդակություն փաստաթղթային, իրավական հարցերում և բարոյական աջակցություն:
9. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման բնագավառում նախատեսվում է սպորտային միջոցառումների անցկացում, սպորտային առանձին խմբակների ստեղծում, միջհամայնքային մրցումների անցկացում: Սպորտային դաշտերի կառուցում և համապատասխան գույքով ապահովում
10. Նախադպրոցական դաստիարակության բնագավառում նախատեսվում է՝ մանկապարտեզի կառուցում, գույքի և սարքավորումների ձեռք բերում և պայմանների բարելավում:
11. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում նախատեսվում է՝ դասընթացների կազմակերպում, բնակչությանն իրազեկման ազդանշանային սարքավորումների տեղադրում, պարզագույն թաքստոցների կառուցում:
12. Պետական պաշտպանության աջակցման բնագավառում նախատեսվում է՝ ռազմահայրենասիրական միջոցառումների իրականացում, բանակային կյանքին վերաբերվող հարցերի լուսաբանում, զինապարտների պարբերական հաշվառում և զինկոմիսարիատների հետ փոխհամագործակցություն:
13. Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում նախատեսվում է՝ սոցիալական նպաստների տրամադրում, ֆինանսական օգնության տրամադրում փարոս համակարգում չընդգրկված, սակայն սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքներին: Նախատեսվում է նաև բարեգործական կազմակերպությունների միջոցով որոշակի օժանդակություն /անասունների տեսքով, գույքի տեսքով և այլն/:
14. Հաշմանդամներին հասարակական կյանքին մասնակցության խթանման բնագավառում նախատեսվում է համագործակցություն „Խարիխս,, կազմակերպության հետ, համանդամների ընդգրկել զանազան հանձնաժողովների և խմբերի մեջ: Ստեղծել պայմաններ նրան ազատ տեղաշարժի համար/ սայլուղիներ կառուցում և այլն:
15. Բարեգործության խթանման բնագավառում նախատեսվում է արտերկրներում բնակվող մեր հայրենակիցներին պարբերաբար տեղեկացում համայնքի հասարակական կյանքին, խնդիրներին և լուծման ուղիներին: Լայնորեն լուսաբանել համայնքում կատարված ցանկացած բարեգործություն: Կազմակերպել մեծարման ցերեկույթներ :Համագործակցում բարեգործական կազմակերպությունների հետ, ստեղծել բարեգործների անկյուն և լուսանկարների միջոցով լուսաբանել բարեգործների աշխատանքները և ստացված արդյունքները:

16. Համայնքի բնակչության հոգևոր կյանքի զարգացման և պահպանման համար նախատեսվում է առանձնակի կարևորություն ունեցող, կիսավեր եկեղեցու վերակառուցումը

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Ակտիվ մարզական միջոցառումները միտված են երիտասարդության ակտիվացմանը-, Ֆուտբոլի դաշտի կառուցումը կնպաստի առողջ ապրելակերպի, բնակչության կենսունակության ու համայնքին մտածողության բարձրացմանը:
2. Համայնքի ճանապարհների պահպանման և շահագործման ծրագրերի արդյունքում կունենանք բարեկարգ շեֆենապատված ճանապարհներ, վերանորոգված ջրհեռացման առու, մաքուր և գրավիչ համայնք՝ բնակվողների և զբոսաշրջիկների համար:
3. Աղետների ռիսկերի նվազեցման և քաղ. Պաշտպանության միջոցառումների շնորհիվ կապահովվի բնակչության անվտանգությունը և բնականոն կյանքի գործունեությունը:
4. Զբոսաշրջության ծրագրերի նպատակն է ավելի գրավիչ և հասանելի դարձնել մեր համայնքը զբոսաշրջիկների համար. Ասֆալտապատելով դեպի Սոճուտ հանգստյան տուն ,Դենդրոպարկ բուսաբանական այգի և Տորմակ եկեղեցի տանող գրեթե անանցանելի ճանապարհը՝ կկրկնապատկվի զբոսաշրջիկների թիվը
5. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման նպատակն է ունենալ փողոցային լուսավորության լապտերների ավելացում, ժամանակակից ենթակառույցներով և շինություններով մաքուր՝ աղբահարթակներով և աղբամաններով կահավորված համայնք, որտեղ աղբատար մեքենայով աղբը պարբերաբար հեռացվում է համայնքից:
6. Մշակույթի և կրթության զարգացման ծրագիրը հնարավորություն կնվճենի բնակիչներին բացահայտել իրենց ներուժը .Մշակույթի տան կահավորումը, համապատասխան տեխնիկայի ձեռք բերումը՝ հնարավորություն կնվճենի ներգրավել համապատասխան մասնագետների և կազմակերպել տարբեր մշակույթային խմբակներ.
- 7.Համայնքն ավելի բարեկեցիկ դարձնելու ծրագիրը ուղղված է հատուկ արժեքներ ունեցող կիսավեր կառույցների վերականգնմանն. Եկեղեցու վերակառուցումը կամրապնդի մարդ եկեղեցի կապը,հնարավորություն կնվճենի մատաղ սերնդին դաստիարակել որպես իսկական Քրիստոնյա.
8. Համայնքի հրատապ ծրագրերից է Գերեզմանատան ցանկապատումը,որը հնարավորություն կտա համապատասխանացնել գերեզմանատունը պահպանելու քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին.

4. Համայնքի զարգացման ծրագրի ֆինանսավորումը

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
իրականացվում է համայնքի ներդրումներով:
3. ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ - իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով
4. ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ - իրականացվում է է
համայնքի բյուջեի միջոցներով: համայնքի աշխատուժի ներդրմամբ
5. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ - իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով, և
բարեգործական կազմակերպությունների ներգրավմամբ
6. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ - իրականացվում է համայնքի բյուջեի և
բարեգործական կազմակերպությունների ներգրավմամբ
7. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՑՔԻ և ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ - իրականացվում է
համայնքի բյուջեի միջոցներով. Բնակիչների աջակցությամբ և բարերարների նվիրատվությամբ
8. ՊՈՒՐԱԿԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ - իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով, համայնքի
աշխատուժի ներդրմամբ, բնակիչների աջակցությամբ
9. ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ - իրականացվում է միջոցների հայթհայթմամբ
համապատասխան կազմակերպությունների ներգրավմամբ. Նաև հանգանակության և
նվիրատվության միջոցով
10. ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ - իրականացվում է միջոցների հայթհայթմամբ
համապատասխան կազմակերպությունների ներգրավմամբ. Շահագրգիռ ձեռներեցների
ներդրմամբ
11. ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ - իրականացվում է համայնքի բյուջեի
միջոցներով. Բնակիչների աջակցությամբ և բարերարների նվիրատվությամբ

5. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը - իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը : Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագրի նակատմամբ իրականացված մոնիթորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների: